ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՄԻՇՈՓ-ն ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/168 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
138	BOOX	BOOX Note Air 5C	ONYX INTERNATIONAL INC.	Գունավոր էկրանով էլեկտրոնային գիրք / թվային նոթատետր (E-Ink Պլանշետ) Ընդհանուր նշանակությունը և կիրառությունը. Ձեռք բերվող սարքը նախատեսված է բարձր պահանջներ ունեցող մասնագիտական աշխատանքի, գծագրերի, նախագծային փաստաթղթերի հետազոտման և ձեռագիր նշումներ կատարելու համար: Այն իրենից ներկայացնում է մեծ արտադրողականությամբ օժտված թվային նոթատետր (E-Ink պլանշետ)՝ թղթի էֆեկտով էկրանով: Մեծածավալ տեքստերի, հաշվետվությունների արագ մուտքագրման և սարքի բազմաֆունկցիոնալ պաշտպանվածությունն ապահովելու համար համակարգը համալրված է ներկառուցված ստեղնաշարով հագեցած պաշտպանիչ պատյաններով: Էկրանի տեխնոլոգիան և տեսողական

				հարմարավետությունը. Սարքը հագեցած է 10.3 դյույմանոց գունավոր էլեկտրոնային թղթի էկրանով՝ հիմնված E Ink Kaleido տեխնոլոգիայի վրա, որն ապահովում է կրկնակի սենսորային կառավարում՝ մատների հպման (կապասիտիվ) և հատուկ ստիլուսով աշխատելու համար (Wacom ինդուկտիվ շերտ)։ Էկրանի կետայնությունը սև-սպիտակ ռեժիմում բարձր հստակության 300 ppi, իսկ գունավոր ռեժիմում ապահովի գծագրերի, գունավոր սխեմաների ու դիագրամների հստակ ընթերցելիություն՝ մինչև 4096 գունային երանգների արտացոլմամբ։ Էկրանի մակերեսը ունի հատուկ պաշտպանիչ ապակի, որը նվազեցնում է արտացոլումները (արևի կամ լամպի լույսի տակ) և ստեղծում է սովորական թղթի վրա գրելու զգացողություն։ Ցանկացած լուսավորության պայմաններում (ներառյալ լիակատար մթության մեջ) աշխատելու համար սարքը ունի ներկառուցված խելացի լուսավորության համակարգ՝ առանց թարթման (Flicker-Free), որը հնարավորություն է տալիս անկախ ձևով կարգավորել և համադրել տաք ու սառը լույսի երանգները՝ աչքերի հոգնածությունը բացառելու համար։ Ապարատային հզորություն և արագագործություն Ծավալուն գծագրային ֆայլերի (օրինակ՝ PDF, CAD էսքիզներ) արագ բացման և էջերի սահուն թարմացման համար սարքը համալրված է արդիական 8-միջուկանի պրոցեսորով, 6 ԳԲ օպերատիվ հիշողությամբ և 64 ԳԲ ներկառուցված հիշողությամբ։ Սարքը աջակցում է նաև հիշողության ընդլայնում MicroSD քարտերի միջոցով (մինչև 2 ՏԲ)։ Սարքում

				կիրառված է գրաֆիկական պատկերի արագացման հատուկ համակարգ, որը նվազագույնի է հասցնում էլեկտրոնային թղթին բնորոշ մնացորդային պատկերները (ghosting) արագ էջադրման ժամանակ: Ծրագրային ապահովում և մասնագիտական ֆունկցիաներ Օպերացիոն համակարգը Android բազայի վրա Android 13 հավելվածների տեղադրման լիարժեք հնարավորությամբ (Google Play Store): Սարքը ապահոված է տեքստային, գրաֆիկական և աուդիո ֆայլերի բոլոր հիմնական ձևաչափերի (PDF, DJVU, DOCX, EPUB, FB2, MP3 և այլն) անխափան ընթերցումն ու խմբագրումը: Նշումների ներկառուցված համակարգը թույլ է տալիս աշխատել բազմաշերտ գծագրության (Layers) ռեժիմով, ունի ձեռագիր տեքստի ճանաչման (OCR) ֆունկցիա և հնարավորություն տալիս անմիջապես PDF կամ այլ փաստաթղթերի վրա ստիլուսով կատարել սրբագրումներ ու նշումներ: Լրակազմի մեջ մտնող ստիլուսը աշխատում է առանց լիցքավորման և աջակցի սեղմման ուժգնության ճանաչման 4096 մակարդակ: Կապ, ինտերֆեյսեր և էրգոնոմիկա Սարքը հագեցած է երկհաճախականություն ունեցող Wi-Fi (2.4ԳՀց և 5ԳՀց) և Bluetooth անլար կապով: Արտաքին կրիչներ (Flash կրիչներ, կոշտ սկավառակներ) միացնելու համար առկա է USB Type-C պորտ՝ OTG աջակցմամբ: Ձայնային ֆայլերի և ձայնային նշումների (թելադրությունների) համար սարքը ունի ներկառուցված ստերեո բարձրախոսներ և բարձր զգայունության միկրոֆոն: Կորպուսը պատրաստված է թեթև և բարձրամուր

				ալյումինե համաձուլվածքից (մետաղական կորպուս)։ Էրգոնոմիկայի տեսանկյունից սարքն ունի կողային լայնացված եզր՝ ձեռքով հարմար բռնելու համար, և ներկառուցված G-սենսոր՝ էկրանի պատկերը ավտոմատ շրջելու համար (Auto-rotation)։ Տվյալների անվտանգության համար միացման կոճակի մեջ ներկառուցված է մատնահետքի սկաներ։ Մարտկոցի տարողությունը 3700 մԱժ (mAh)՝ երկարատև ինքնավար աշխատանք ապահովելու համար։ Լրակազմի և աքսեսուարների պահանջներ։ Մատակարարվող լրակազմում, բացի բուն էլեկտրոնային սարքից (E-Ink պլանշետից), մագնիսական ամրացմամբ էրգոնոմիկ ստիլուսից (գրիչից) և USB Type-C միացման կաբելից, պարտադիր ներառված է հետևյալ աքսեսուարները՝ Օրիգինալ պաշտպանիչ սովորական պատյան (case), որն ունի մագնիսական ամրացման և սարքը տարբեր անկյունների տակ կանգնեցնելու (stand) հնարավորություն՝ ընթերցանության և գծագրության ժամանակ հարմարավետություն ապահովելու համար։ Օրիգինալ ստեղնաշար-պատյան (keyboard case), որը սարքին միանում է մագնիսական կոնտակտների միջոցով՝ թույլ տալով պլանշետը վերածել լիարժեք տեքստային տվյալների և նախագծային նշումների արագ մուտքագրման համար։ Սարքի և բոլոր բաղադրիչների համար գործում է պաշտոնական 1 տարի երաշխիքային սպասարկում։ Ապրանքը նոր է, չօտագործված, անվնաս, չպարունակի գործարանային դեֆեկտներ։ Ապրանքը պրոֆեսիոնալ (մասնագիտացված) դասի և նախատեսված է մեծ

				ճնշումներով և երկարատև մասնագիտական աշխատանքի համար: Մատակարարումից առաջ ապրանքը և արտադրողի անվանումը մոդելը կհամաձայնեցվի պատվիրատուի հետ: Մատակարարումից առաջ, նախապես կներկայացվի նմուշ և կհամաձայնեցվի պատվիրատուի հետ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

МИШОП в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/168 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	марка	наименование производителя	технические характеристики
138	-	-	-	-